ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Արտակ Մովսիսյան

ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)[1]

Հիմնաբառեր. *Հայոց պատմություն, Ստրաբոն, պատմական ժողովրդագրություն, Միջագետք, Ադիաբենե, Կողքիս, Վրկանաց աշխարհ*

ՄՈՒՏՔ

Յուրաքանչյուր ժողովրդի անցյալի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն պատմաժողովրդագրության տվյալները, որոնք մեծապես նպաստում են բազմաթիվ հարցերի լուսաբանմանն ու ճշգրիտ ընկալմանը: Դա վերաբերում է ոչ միայն տվյալ էթնոսի՝ իր բնօրրանում և պետության սահմաններում, այլև դրանցից դուրս ունեցած բնակչության քանակին ու բաշխվածությանը:

Հայոց պատմության երկարատև պատմության տարբեր հանգրվաններում ժողովրդագրական հարցերի ուսումնասիրությունն ունի ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ քաղաքական նշանակություն: Վերջինս, հատկապես, կարևորվում է թուրք-ադրբեջանական պատմակեղծարարության շարունակվող անհեթեթ հրապարակումների պարագայում:

Եթե մաշտոցյան դարաշրջանում հայ մատենագիրների երկերում բավականին շատ են հանդիպում պատմաժողովրդագրական տվյալները հայության մասին, ապա նույն չի կարելի ասել նախամաշտոցյան դարաշրջանի մասին: Այս ժամանակաշրջանի վերաբերյալ տեղեկությունները ստանում ենք հիմնականում այլազգի պատմիչների երկերից, որոնցում հայ էթնոսի վերաբերյալ ժողովրդագրական տվյալները խիստ հազվադեպ են: Այդ առումով եզակի բացառություն պետք է համարել հույն ականավոր պատմիչ և աշխարհագրագետ Ստրաբոնին (Ք.ա. I - I դդ.):

Ստրաբոնը ծնունդով Պոնտոսի Ամասիա քաղաքից էր, կրթությունը ստացել էր Նյուսայում և Հռոմում: Նա բավականին շատ էր ճանապարհորդել, այդ թվում՝ եղել էր Հայաստանում, ինչի շնորհիվ նրա հաղորդած պատմաաշխարհագրական վկայությունները դարձել են առավել վստահելի ու հարուստ:

Ստրաբոնի հեղինակած երկերից մեզ է հասել միայն նրա կոթողային «Աշխարհագրություն» աշխատությունը՝ բաղկացած 17 գրքից, որն իր ժամանակաշրջանի յուրօրինակ աշխարհագրական հանրագիտարան է[2]:

Ստրաբոնի «Աշխարհագրությունը» բացառիկ կարևորության սկզբնաղբյուր է հայագիտության համար: Հեղինակի տեղեկությունները Հայաստանի աշխարհագրության, պատմության, մշակույթի ու այլ հարցերի ուսումնասիրության համար հաճախ եզակի են և այլ աղբյուրներում չեն հանդիպում: Ստրաբոնն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է ինչպես Մեծ Հայքի սահմանները բոլոր ուղղություններով, այնպես էլ հայկական փոքր թագավորությունները (Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե, Կորդուք): Չափազանց կարևոր են նրա տեղեկությունները Հայաստանի քաղաքների, գետերի, լեռների, ճանապարհների, անցյալի և իր ապրած ժամանակի

** Հոդվածը ներկայացվել է 29.05.2020 թ., գրախոսվել՝ 06.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ 18T-6A357 ծածկագրով «Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների» գիտական թեմայի շրջանակներում:

[2] Ստրաբոնի կյանքի ու գործի մասին կա մեծածավալ գրականություն: Տե՛ս, օրինակ, Арский Ф. Н., Страбон, М, 1974; Diller A., The Textual Tradition of Strabo's Geography, Amsterdam, 1975; Грацианская Л. И., «География» Страбона. Проблемы источниковедения, «Древнейшие государства на территории СССР», М., 1988, с. 6-175; Engels J., Augusteische Oikumenegeographie und Universalhistorie im Werk Strabons von Amaseia, Stuttgart, 1999; Dueck D., Strabo of Amasia. A Greek Man of Letters in Augustan Rome, London - New York, 2000; Strabo's Cultural Geography. The Making of a Kolossourgia (eds. D. Dueck, H. Lindsay, S. Pothecary), Cambridge, 2005 և այլն:

պատմաքաղաքական զանազան իրադարձությունների մասին: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ստրաբոնը ներկայացնում է նաև տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած պատմաաշխարհագրական փոփոխություններն ու վերաձևումները[1]:

Այս ամենի մասին գրվել են և դեռ կգրվեն մեծ թվով ուսումնասիրություններ: Ստորև ցանկանում ենք ուշադրություն հրավիրել Ստրաբոնի հաղորդած տեղեկությունների մի խմբի վրա, որը, հանիրավի, քիչ ուշադրության է արժանացել: Խոսքը վերաբերում է մեր թվականության սկզբին (Ստրաբոնը մահացել է 23 թ.) Հայաստանից դուրս հայ բնակչության առկայության մասին վկայություններին:

ՀԱՅԵՐԸ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ

Ստրաբոնի «Աշխարհագրության» երկու դրվագում նշվում է Միջագետքում զգալի հայ բնակչության առկայության մասին: Դրանցում շեշտվում է, որ հայերը ասորիների և արաբների հետ միասին եղել են Միջագետքի երեք հիմնական ժողովուրդները. *«Հայերի, ասորիների և արաբների մեծ ցեղակցությունը երևում է լեզվի, կենցաղի և մարմնի նկարագրությունից, անշուշտ, որովհետև իրար հարևան են: Հայտնապես, Միջագետքում, որ այս երեք ժողովուրդներից է բաղկացած, նմանությունը ավելի շատ է երևում նրանց մեջ: ... Այդ ժողովուրդների անվանակոչությունը ենթադրել է տալիս նաև իրար հետ մեծ նմանություն: Այն ժողովուրդները, որ մենք «ասորի» ենք կոչում, իրենք՝ ասորիները կոչում են «արամեացի». Սրան նման է արմենների (=հայերի), արաբների և երեմբների անունը: «Երեմբ» էին կոչում հույներն արաբներին, ինչպես որ բառի ստուգաբանությունից էլ իմացվում է»*[2]:

Նման անվանում ունեցող այս երեք ժողովուրդների ազգակցության մասին Ստրաբոնը խոսում է նաև այլ տեղում. *«Այս երեք մոտիկ հարևան ցեղակից ազգերը, որոնք դրա համար էլ կոչվել են նման անուններով՝ «արմեն», «արամեացի» և «արաբ», ինչպես որ հասկանալի է, թե մի ցեղ կլիմայի տարբերության պատճառով հետզհետե ավելի փոփոխվելով՝ երեքի է բաժանվել, նույնպես և գործածվել են մեկի փոխարեն կանական անուններ»*[3]:

Միջագետքում և հարակից շրջաններում հայ էթնոսի բնակության մասին Ստրաբոնը հիշատակում է նաև Ադիաբենե երկրի նկարագրության առնչությամբ. *«Ահա այն ժողովուրդները, որոնք գտնվում են արևելքում՝ Բաբելոնից վերև. հյուսիսից, ինչպես ասացինք, Մարաստանն ու Հայաստանն է. իսկ արևմուտքում՝ Ադիաբենեի Միջագետքը: Ադիաբենեն մեծ մասամբ դաշտավայր է և Բաբելոնի մաս է համարվում, թեև ունի սեփական իշխանը և կցվել է Հայաստանին: Մարերը, հայերը և երրորդը՝ բաբելացիները, այս կողմերի ազգերից մեծագույնները, սկզբից հարաբերության մեջ էին իրար հետ, պատեհ առթիվ հարձակվում էին իրար վրա, հետո բանակցում և նորից հաշտվում»*[4]:

Ինչ խոսք, Հայաստանի և Միջագետքի փոխհարաբերություններն ունեին արդեն հազարամյակների պատմություն և հայկական էթնիկ տարրի ներկայությունը Միջագետքում կարելի է համարել միանգամայն օրինաչափ: Փորձենք դիտարկել, թե երբ և ինչպես կարող էր հայ էթնոսը դառնալ Միջագետքը բնակեցնող երեք հիմնական տարրերից մեկը:

Ամենավաղ գրավոր վկայությունները Հայաստանի և Միջագետքի հարաբերությունների մասին վերաբերում են դեռևս Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին, երբ, ըստ շումերական աղբյուրների, Արատտա երկրից վարպետներ էին գնում Շումեր՝ այնտեղ տաճարներ կառուցելու

---

[1] *Ստրաբոնի՝ Հայաստանին և հայերին վերաբերող հատվածները տե՛ս Ստրաբոն (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան), Յեր., 1940: Ստրաբոնի աշխատության առանձին հատվածներ Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ հրատարակվել են «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» առաջին հատորում (Ե., 2007): Հայերեն թարգմանությունները կատարվել են Ստրաբոնի «Աշխարհագրության» 1925 հրատարակությունից (տե՛ս Strabonis Geographica, recognovit A. Meineke, vol. I-III, Lipsiae, 1925):*

[2] *Ստրաբոն, գիրք I, գլուխ 2, 34:*

[3] *Նույն տեղում, գիրք XVI, գլուխ 4, 27: Հին աշխարհում նմանահունչ ցեղանուններ ունենալը, հարևանությամբ բնակվելը և այդ ընթացքում կենցաղի ու լեզվական առնչությունները բավարար պայման էին ժողովուրդներին ազգակից համարելու համար: Հասկանալիորեն, հնդեվրոպական ծագում ունեցող հայերն ազգակից չեն սեմական ծագման արամեացիների (ասորիների) և արաբների հետ:*

[4] *Նույն տեղում, գիրք XVI, գլուխ 1, 18-19:*

նպատակով[1]: Այս վկայությունը վերաբերում է Ք.ա. XXVIII-XXVII դարերին, իսկ քիչ ավելի ուշ՝ Ք.ա. XXVI-XXVI դդ., միջագետքյան աղբյուրները հայտնում են, որ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան Սուբուր-Արմանի թագավորությունից Միջագետք էին գնում դպիներ, հացթուխներ, դարբիններ, և այգեպաններ[2]:

Հաջորդ ժամանակաշրջանը, երբ Հայկական լեռնաշխարհից կարող էր տեղի ունենալ բնակչության որոշ զանգվածների տեղաշարժ դեպի Միջագետք, Բաբելոնիայում քասեցիների (կասիտների) դինաստիայի իշխանության ժամանակն է (Ք.ա. 1595-1155 թթ.): Այդ դինաստիան ծագում էր Հայկական լեռնաշխարհից: Քասեցիների արշավանքը մեկնարկել է Եփրատի վերին հովտի երկրներից՝ Թեգարամայից, Խիմուվայից և Իսուվայից (Ծոփքից), որոնք սեպագիր արձանագրություններում կոչվում են «քասիական»[3], իսկ Մասիուս-Մասիոն (այժմ՝ Տուր-Աբդին) լեռներն ասորեստանյան աղբյուրներում կոչվում են Քաշիարի (Քասիարի)[4]: Ք.ա 1595 թ. քասեցիները նվաճվեցին Բաբելոնը, և նրանց արքայատոհմն իշխեց Բաբելոնիայում մինչև Ք.ա. 1155 թվականը: Քասեցի արքաները Բաբելոնիային տիրելուց հետո այն կոչեցին Քարդունիաշ (անջատելով վերջավորությունները՝ կստանանք բուն տեղանունը՝ Քարդու), որը Հայաստանի անվանումներից մեկն է. այդ անվամբ է Հայաստանը կոչվում նաև Աստվածաշնչի հին ասորական Պեշիտտա թարգմանության մեջ[5]: Հատկանշական է նաև, որ Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի հնագիտական առնչություններում իր առատությամբ առանձնանում է քասեցիական Բաբելոնի դարաշրջանը[6]:

Հայ բնակչության՝ Միջագետքում հայտնվելու հնարավորության տևական ժամանակամիջոց էր Միջին և Նոր Ասորեստանի ժամանակաշրջանները (Ք.ա. XIII-VII դդ.): Այս հսկա ժամանակամիջոցում ասորեստանյան բանակները տասնյակ արշավանքներ են ձեռնարկել դեպի Հայկական լեռնաշխարհ, որոնց արդյունքում գերեվարված հայ բնակչության որոշ զանգվածներ կարող էին հայտնվել Միջագետքում[7]:

Հաջորդն Աքեմենյան աշխարհակալության ժամանակաշրջանն է, որից ունենք ուշագրավ վկայություններ հայ-միջագետքյան փոխառնչությունների մասին: Դրանցից մեկը Դարեհ Ա-ի Բեհիսթունյան արձանագրության հայտնի փաստն է, որում նշվում է, որ բացի Հայաստանում պարսից տիրակալին ցույց տված հուժկու դիմադրությունը, Բաբելոնում ապստամբության գլուխ էր կանգնել հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին[8]: Սա թույլ է տալիս ենթադրելու Բաբելոնում հայ համայնքի գոյության մասին:

---

[1] Տե՛ս Kramer S. N., Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia, 1952, p. 8-9, 14-15, 28-29; Канева И. Т., Шумерский героический эпос как исторический источник, "Вестник древней истории", Москва, 1964, N 3-4, с. 205, 208, 214; Cohen S., Enmerkar and the Lord of Aratta, Ann Arbor, 1973, p. 113, 118; The Electronic Text Corpus of Sumerian Literature: Composite Text, Translation, Bibliography (www-etcsl.orient.ox.ac.uk, մուտք՝ 07.07.2020 թ.), տող 31-32, 130-133, 374-377:

[2] Տե՛ս Gelb I.J., Hurrians and Subarians, Chicago, 1944, p. 31-32.

[3] Տե՛ս Otten H., Kaššija, "Reallexikon der Assyriology und vorderasiatischen Archäologie", V Bd., V-VI Lieferung, Berlin - New York, 1980, p. 464.

[4] Տե՛ս Postgate J. N., Kašiaru, "Reallexikon der Assyriology und vorderasiatischen Archäologie", V Bd., V-VI Lieferung, Berlin - New York, 1980, p. 460.

[5] Տե՛ս Ինգլիկեան Վ., Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947, էջ 5-8:

[6] Տե՛ս Փիլիպոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Ե., 1998, էջ 102:

[7] Ք.ա. XIII-IX դդ. Ասորեստանի՝ դեպի Նաիրյան երկրներ կատարած արշավանքների և այդ ընթացքում տեղի ունեցած գերեվարությունների մասին տե՛ս Ադոնց Ն., 1972, էջ 52-66; Пиотровский, 1959, էջ 43-60; Salvini, 1967: Ք.ա. I հազ. առաջին կեսին Ասորեստանի և Վանի թագավորության վարած տեղահանությունների և էթնիկ տեղաշարժերի քաղաքականության մասին տե՛ս Ցականյան Ռ., Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ., Ե., 2018, էջ 10-59 (նաև հղված գրականությունը):

[8] Այդ մասին պատմվում է արձանագրության §§ 49-52-ում (Բեհիսթունյան արձանագրությունն ամբողջությամբ տե՛ս Kent R.G., Old Persian. Grammar, Texts, Lexicon, Parts I-III, New Haven, 1953, p. 107-108, 116-135; Նալբանդյան Գ., Դարեհ Վշնասպի Բիսեթունյան արձանագրությունը, Երևան, 1964; Lecoq P., Les inscriptions de la Perse achéménide, Gallimard, 1997, p. 83-96, 187-217; Schmitt R., Die altpersischen Inschriften der Achaimeniden, Wiesbaden, 2009, p. 9-10, 36-96):



Հայ էթնոսի տարածման աշխարհագրությունն ըստ Ստրաբոնի (հեղ. Ա. Մովսիսյան)

Ք.ա. 418 թ. թվագրվող սեպագիր մի սալիկում տեղեկություն կա «ուրարտացիների և մելիդցիների» մասին, որ զինվորական ծառայություն էին կատարում հարավային Միջագետքի շումերների երբեմնի սրբազնագույն Նիպպուր քաղաքի շրջանում[1]: Հայկական բանակային միավորումները տարբեր առաքելություններ են կատարել Աքեմենյան տերության տարբեր շրջաններում: Հայտնի է, որ, օրինակ, Արտաքսերքսես II-ի դեմ ապստամբած Կապադովկիայի սատրապ Դատամեսի դեմ ուղարկված պատժիչ զորքի կազմում կար նաև 10 հազարանոց հայկական զորագունդ[2]:

Եվ, ի վերջո, հայ բնակչության որոշ զանգվածների տեղաշարժ դեպի հարևան հարավային Միջագետք կարող էր տեղի ունենալ Տիգրան Մեծի աշխարհակալության տարիներին: Հանրահայտ է էթնիկական տեղաշարժերի նրա քաղաքականությունը[3]: Ուշագրավ է, որ Հյուսիսային Միջագետքի կենտրոն Ուռհայի (Եդեսիայի) մասին հայկական ավանդությունը քաղաքի հիմնադրումը կապում է Տիգրան Մեծի եղբորորդի Աբգարի հետ[4]: Ուռհայի՝ հայերի հիմնած քաղաք լինելու մասին պատկերացումը վկայված է նաև IV դ.: Հիշենք Բյուզանդիայի (Արևելյան Հռոմեական կայսրության) կայսրին Պապ թագավորի (370-374 թթ.) գրած նամակը, որի մասին հիշատակում է Փավստոս Բուզանդը. «Հետո պատգամավորներ էր ուղարկում Հունաց թագավորի մոտ, թե Կեսարիայի հետ ուրիշ տասը քաղաքները մերն են եղել, ետ տուր. Ուռհա քաղաքն էլ մեր նախնիք

---

[1] *Տե՛ս Clay A. T., Business Documents of Murashu Sons of Nippur Dated in the Reign of Darius II, 1904, p. 62, 107; Дандамаев М. А., Клинописные данные об армянах, с. 102-106, 115; Khorikyan H. G., The Administrative Division of the 13th Satrapy of Achaemenid Persia in the Reign of Darius II, "Метаморфозы истории", Научный альманах, выпуск 10, Псков, 2017, с. 174-180.*

[2] *Այդ մասին տեղեկացնում է Կորնելիոս Նեպոտը (Ք.ա. I դ.) «Օտարերկրացի նշանավոր զորավարների մասին» աշխատության էջերում (Cornelius Nepos (with an English trans. by J. C. Rolfe), London, 1960, p. 514):*

[3] *Որպես խոսուն վկայություն կարելի է մեջբերել Պլուտարքոսի մի հաղորդումը Տիգրան Մեծի մասին. «Երբ Տիգրանը նոր միայն սկսում էր, նրա ծրագրերն ու հնարավորությունները խիստ համեստ էին, իսկ այժմ նա հպատակեցրել է բազում ժողովուրդների, խորտակել է, ինչպես դեռևս չէր հաջողվել ուրիշ մեկին, պարթևների հզորությունը, իսկ Միջագետքը հեղեղել է հելլեններով, որոնց նա ամբողջ բազմություններով բռնագաղթեցրել էր Կիլիկիայից ու Կապադովկիայից: Այլ ժողովուրդներից նա արաբական քոչվոր ցեղերին քշեց իրենց նախկին վայրերից և բնակեցրեց իր մայրաքաղաքի մոտ, որպեսզի նրանց օգտագործի առևտրական կարիքների համար» (Պլուտարքոս, Համեմատական կենսագրություններ, Լուկուլլոս, 21):*

[4] *Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԻԴ, ԻԷ:*

են շինել, ուստի եթե չես ուզում, որ խռովություն ծագի, ետ տուր, հակառակ դեպքում մեծ պատերազմով կպատերազմենք»[1]...:

Ահա այսպիսի երկարատև ճանապարհ է անցել հայ-միջագետքյան փոխառնչությունների պատմությունը, որը թույլ է տալիս տարբեր ժամանակաշրջաններում տեսնելու դեպի Միջագետք հայ բնակչության զգալի հատվածների տեղափոխման հնարավորությունը, ինչի շնորհիվ էլ հայերը դարձել են Միջագետքը բնակեցնող երեք հիմնական ժողովուրդներից մեկը:

ՀԱՅԵՐԸ ԿՈՂՔԻՍՈՒՄ (ԿՈԼԽԻԴԱ)

Բուն Հայաստանից դուրս մյուս երկրամասը, որում առկա էր հայ բնակչություն, գտնվում էր հյուսիսում՝ Սև ծովի առափնյա շրջանում: Դա Կողքիս (Կոլխիդա) երկիրն էր, որի Մոսքիկե գավառը (մոսխերի երկիրը) բնակեցնող երեք ազգերից մեկը հայերն էին. *«Մոսքիկեն, ուր կա նշանավոր մի տաճար, երեք մաս ունի. առաջինը կբաղեցում են կողքիսցիները, երկրորդը՝ վրացիները, իսկ երրորդը՝ հայերը»*[2]:

Հյուսիսային սահմանակից երկրում հայերի հայտնվելն անսպասելի չէ, առավել ևս, եթե նկատի ունենանք, որ անցյալում այդ տարածքն ինչ-որ ժամանակ ընդգրկվել է Հայաստանի կազմի մեջ: Խոսքը, մասնավարապես, Վանի թագավորության ժամանակաշրջանում Սարդուրի Բ-ի կողմից Կուլխա երկրի (Կոլխիդա, Կողքիս) նվաճման մասին է: Ք.ա. 740-ական թթ. տեղի են ունենում Սարդուրի Բ-ի երկու արշավանքները դեպի հյուսիս, որոնցից առաջինի ժամանակ նա նվաճում է Կուլխա երկիրը: Երկու տարի անց Սարդուրի Բ-ն Կուլխայի դեմ ձեռնարկում է երկրորդ արշավանքը: Նվաճվում են Կուլխայի բազմաթիվ քաղաքներ, այդ թվում՝ մայրաքաղաք Իլդամուշան, որի կայազորն ու բնակչությունը ոչնչացվում են: Իր հաջողությունը հավերժացնելու նպատակով Սարդուրին հրամայում է նվաճված մայրաքաղաքում կանգնեցնել իր գործերը փառաբանող արձանագրություն-կոթող: Դրանով Սարդուրին վերջնականապես ամրապնդում է Վանի թագավորության տիրապետությունը նաև Սև ծովի ափին[3]:

Մի նկատառում ևս. արգոնավորդների մասին զրույցների վաղ շրջանի գրառումներում Յասոնը և նրա ընկերները Ոսկե Գեղմը ձեռք բերելու նպատակով Արգո նավով նավարկում են դեպի Սև ծովի հարավ-արևելյան ափին գտնվող Այա երկիրը: Ավելի ուշ շրջանի գրառումներում, թերևս, հենց հունական գաղութացման ժամանակաշրջանում, Այա երկիրը փոխարինվեց Կոլխիդա (Կողքիս) երկրով: Այա երկիրը մի շարք գիտնականներ նույնացնում են Հայա-Հայասա երկրի հետ[4]: Այսինքն՝ հայկական էթնիկ տարրի ներկայությունը Կոլխիդա-Կողքիսի տարածքում կարելի է ենթադրել դեռևս Ք.ա. II հազարամյակում և I հազարամյակի առաջին կեսին:

ՀԱՅԵՐԸ ՎՐԿԱՆԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ըստ Ստրաբոնի՝ հայ բնակչություն կար նաև Հայաստանից արևելք ընկած տարածքում՝ Կասպից ծովի հարավային, (նաև՝ հարավարևելյան) ափամերձ շրջաններում, որտեղ գտնվում է Վրկանաց աշխարհը. *«...Այնուհետև Վրկանաց աշխարհն է, որից սկսած՝ Կասպից ծովը ընդարձակվում է, մինչև հասնում է Մարաստանի և Հայաստանի լեռները: Սրանք ներքևում ունեն մահիկաձև կերպարանք և վերջավորվում են ծովի մոտ՝ ձևացնելով ծոցի խորքը: Լեռների երկարությամբ՝ ծովից սկսած մինչև բարձունքը, բնակվում են քիչ քանակությամբ աղվաններ ու հայեր. և ավելի շատ գեղեր, կադուսիններ, ամարդներ, կյուրտիներ, անարիակները և ուրիշ կանապան ցեղեր, որոնք ավելի ավազակ ու պատերազմիկ են, քան երկրագործ...»*[5]:

---

[1] *Փավստոս Բուզանդ, դպր. Ե, գլ. ԼԲ:*

[2] *Ստրաբոն, գիրք XI, գլուխ 2, 18:*

[3] *Մանրամասն տե՛ս արքայի գործերի մասին պատմող Սարդուրյան տարեգրությունը (Арутюнян Н. В., Корпус урартских клинообразных надписей, Е., 2001, с. 234-235, 238-239; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 177-178, թարգմ. Հ. Հ. Կարագյոզյանի):*

[4] *Տե՛ս Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 285; Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Ե., 1997, էջ 86-89; Մարտիրոսյան Հ., Արգոնավորդների արշավանքը և Հայաստանը, «Հայոց պատմության և մշակույթի հարցեր», գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Ե., 1997, էջ 24 և այլն:*

[5] *Ստրաբոն, գիրք XI, գլուխ 7, 1:*

Եթե Կողքիսում հայ բնակչության առկայությունը կարելի է բացատրել Հայաստանի հետ հարևանությամբ և մշտական աշխույժ առնչություններով (ինչպես Միջագետքի պարագայում), ապա նույնը դժվար է պնդել այս պարագայում: Թե երբ և ինչ հանգամանքներում են հայերը հայտնվել Վրկանաց աշխարհում, մեզ մնում է լիովին անհայտ:

Այդուհանդերձ, ցանկանում ենք երկու փաստի վրա հրավիրել ընթերցողների և ոլորտի մասնագետների ուշադրությունը, որոնք կարող են այս կամ այն կերպ կապ ունենալ հիշյալ վկայության հետ: Առաջինը վերաբերում է Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորության ժամանակաշրջանին, մասնավորապես Արգիշտի Բ արքայի իշխանության տարիներին (Ք.ա. մոտ 710-680 թթ.): Այս արքան գործուն արտաքին քաղաքականություն էր իրականացնում ապագա Ատրպատականի տարածքում՝ հասնելով, թերևս, մինչև Կասպից ծով: Այդ մասին են վկայում Ռազլիկ և Նաշտեբան հնավայրերից գտնված նրա սեպագիր արձանագրությունները[1]: Վերջիններիս լրացնելու եկավ Գիլանից հայտնաբերված «Արգիշտի» արքայանունը կրող սեպագիր մակագրությամբ ապարանջանը[2]: Գիլանի և Արարատ-Ուրարտուի առնչությունների մասին կան այլ հնագիտական վկայություններ ևս[3], ինչը որոշակի կարևորություն կարող է ստանալ մեր խնդրի տեսանկյունից: Իհարկե, այս դեպքում էլ բաց են մնում մի շարք հարցեր, որոնց պատասխանները ևս չունենք:

Երկրորդ փաստը վերաբերում է հայ իրականության և Կասպից ծովից արևելք ընկած տարածքների կապին: Ստրաբոնի ապրած ժամանակին նախորդող շրջանից մեզ հայտնի այդպիսի միակ փաստը վերաբերում է Տիգրան Մեծի և միջինասիական սակարաուկների միջև կապին: Վերջիններիս զորագնդերը Տիգրան Մեծի զորքի կազմում մասնակցել են ռազմական գործողությունների[4]: Հասկանալիորեն, այդ կապը պետք է իրականացած լինի Կասպից ծովի հարավային և արևելյան տարածքներով: Սակայն այս դեպքում ևս չունենք որևէ կռվան՝ ցույց տալու, թե ինչպես կարող է այդ փաստը բացատրել հայ բնակչության որոշ զանգվածների առկայությունը Վրկանաց աշխարհում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ավարտելով՝ ցանկանում ենք ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրել Ստրաբոնի տեղեկությունների կարևոր այս խմբի վրա: Դրանք վկայում են մեր թվականության սկզբին Հայաստանից դուրս զգալի թվով հայ բնակչության առկայության մասին: Ստրաբոնի վկայություններից պարզ է դառնում, որ այդ ժամանակ հայկական էթնիկ տարրը բուն Հայաստանից դուրս տարածվել էր առնվազն երեք ուղղությամբ՝ դեպի հարավ (Միջագետք, Ադիաբենե), հյուսիս (Կողքիս) և արևելք (Վրկանաց աշխարհ):

Ներկայացված փաստերը կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև հայ գաղթաշխարհի ուսումնասիրության դիտանկյունից: Հայ գաղթաշխարհի պատմության սկզբնավորումն այսօրվա գիտության մեջ թվագրվում է IV դարով, երբ բազմահազար հայեր բռնի գաղթեցվելով՝ ցրվեցին Սասանյան տերության տարբեր շրջաններում[5]: Ստրաբոնի այս վկայությունները ցույց են տալիս, որ նրա ապրած ժամանակաշրջանում արդեն առկա էր հայ էթնոսի սփռվածություն իր հայրենիքի սահմաններից դուրս, ընդ որում, երեք ուղղությամբ: Իսկ դա լիովին իրավունք է տալիս մեզ հայոց գաղթաշխարհի պատմությունը սկսել մեր թվականության I դ. սկզբից:

---

[1] *Տե՛ս Арутюнян Н. В., Корпус урартских клинообразных надписей, с. 409-411.*

[2] *Տե՛ս Grekian Y., Dalalian T., An Urartian Bracelet from Gilan, "Iran and the Caucasus", 2004, Volume 8, Issue 1, p. 1-6.*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 2-3 (տե՛ս նաև հղված պարսկալեզու գրականությունը):*

[4] *Մանրամասն տե՛ս Манасерян Р. Л., Международные отношения на Переднем Востоке в 80-70-х годах до н. э. (Тигран II и войска с берегов Аракса), "Вестник древней истории", 1992, N 1, с. 152-160.*

[5] *Հիմնախնդրի շուրջ եղած հիմնական մոտեցումների և փաստարկների քննարկումը տե՛ս Եղիազարյան Ա., Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ, «Սփյուռքագիտություն», Տարեգիրք, Ե., 2013, էջ 3-28:*

Артак Мовсисян, ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА). Одним из важнейших источников по истории древней Армении является “География” Страбона (I век до р. Хр. – I в.). Сведения Страбона показывают, что накануне нашей эры армяне обитали не только в Армении (на территории армянских царств), но и за ее пределами. В частности, армяне проживали на территориях Месопотамии, Колхиды и Гиркании. Автор указывает на важность этих сведений с точки зрения изучения исторической демографии армянского народа.

Ключевые слова: *история Армении, Страбон, историческая демография, Месопотамия, Адиабене, Колхида, Гиркания.*

Artak Movsisyan, THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO). One of the most important sources of the history of ancient Armenia is the “Geography” of Strabo (I cent. BC – I cent. AD). The information of Strabo indicates that on the eve of our era the Armenians lived not only in Armenia (on the territory of the Armenian kingdoms), but also beyond its borders. In particular, the Armenians lived in the territories of Mesopotamia, Colchis and Hyrcania. The author points out the importance of this information from the point of view of studying the historical demography of the Armenian people.

Key words: *history of Armenia, Strabo, historical demography, Mesopotamia, Adiabene, Colchis, Hyrcania.*